հական յազգէն հայոց և աւանդութեամբն հայաստանեաց Սուրբ Եկեղեցւոյ արք հեզ և բարեպաշտ վասն ծայրագոյն դատաւորութեան, և 'ի տանէն հայոց տացի նոցայ նամակ պաշտօնատարութեան առն միոյ մայր դատաւոր և արանց քսան և չորս 'ի դատաւորութեան ժամանակաւ երիս ամաւ նամակն ըստ նմանութեան Օրինակին։

ԳԼՈՒԽ ԻԳ.

'Ի միջոցէ բոլոր փոխանորդացէ 'ի տանէն հայոց ընտրեցեալ լինի այրս երեսուն և վեց սեպհական յազգէն հայոց և աւանդութեամբն հայաստանեաց Սուրբ Եկեղեցւոյ կրթեալ դպրութեան և ատենաբանութեան և հմուտ Օրինաց, և 'ի տանէն հայոց տացէ սոցայ նամակ պաշտօնատարութեան ժամանակաւ երիս ամաւ։

18. Պաշտօն տանն Հայոց
12. Պաշտօն 'ի յապարանն ծայրագոյն դատաստանի։
6. Պաշտօն 'ի ծածուկ խորհրդարանն նախարարին։

Նամակ պաշտօնի սոցայ որպէս Օրինակն։